ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

18 հունվարի 2016թ.

# ՈՐՈՇՈՒՄ 1

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18 ՀՈՒՆՎԱՐԻ 2016Թ. ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**

Հաստատել ավագանու թիվ 1 նիստի օրակարգը

1.Զառիթափի գյուղապետարանի 2016թ-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատում:

2.Զառիթափի գյուղապետի պաշտոնային դրույքաչափը,գյուղապետարանի աշխատակազմի, մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

3.Զառիթափ համայնքի 2016թ-ի բյուջեի հաստատումը:

4.Զառիթափ համայքի ավագանու 2015թ-ի օգոստոսի 8-ի թիվ 32 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

5.Զառիթափ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին:

6. Զառիթափի միջն.դպրոցի կառավարման խորհրդում՝ համայնքի ղեկավարի կողմից խորհրդի անդամ նշանակելու մասին:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 6 դեմ 0 ձեռնպահ 0

Նիստին մասնակցող ավագանիներ՝

Ասլանյան Ե.
Բաբայան Վ.
Ալավերդյան Լ.
Գրիգորյան Գ.
Դավթյան Դ.
Գևորգյան Գ.

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

18 հունվարի 2016թ.

ՈՐՈՇՈՒՄ 2-Ն

ԶԱՌԻԹԱՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2016 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասին 18-րդ կետով, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 7-10-րդ հոդվածների պահանջներով ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝
Սահմանել Զառիթափ համայնքի 2016թ-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը ըստ հավելվածի.

Քվեարկության արդյունքները՝ կողմ 6 դեմ 0 ձեռնպահ 0
Նիստին մասնակցող ավագանիներ՝
Ասլանյան Ե.
Բաբայան Վ.
Ալավերդյան Լ.
Գրիգորյան Գ.
Դավթյան Դ.
Գևորգյան Գ.

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան

հավելված 1

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան ` նոր շենքերի , շինությունների (ներառյալ` ոչ հիմնական ) շինարարության (տեղադրման ) թույլատրության համար տեղական տուրք սահմանվում է `

հիմնական օբյեկտների համար `

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում` այգեգործական (ամառանոցային ) տների ,ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 10000 դրամ;

բ) սույն կետի «ա » ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 20000 դրամ ;

բբ) 501- ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 30000 դրամ:

բգ)- 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 40000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար `

գ) մինչև 20 մինչև քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 3000 դրամ;

դ ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 5000 դրամ;

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման ,վերականգնման , արդիականացման , աշխատանքների ( բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված` շինարարության թույլատվություն չպահանջվող դեպքերի ) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով`

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների ,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում` ստորգետնյա ) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ` 1000 դրամ:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ:

4. Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում `յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել 1000 դրամ : տեղական տուրք :

5.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար սհամանել 1500դրամ տեղական տուրք:

6. Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար տեղական տուրք սահմանել 150000 դրամ:

7. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , ժամը 24.-00ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

ա) առևտրի օբյեկտների համար 25000 դրամ

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50 000 դրամ .

գ) խաղատների կազմակերպման համար 500.000 դրամ

դ) շահումով խաղերի կազմակերպման համար 250.000 դրամ

8 . Համայնքի տարածքում արտաքին գովազդի թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր ամսվա համար 500 դրամ 1 քմ.-ի համար:

9) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 200 դրամ .
տեղական վճարներ

10) Մանկապարտեզ հաճախող երեխաների համար տեղական վճար սահմանել 150 դրամ յուրաքանչյուր օրվա համար ( ծնող գանձում ) :

11 ) Տ.Ի.Մ. կողմից կազմակերպվող աճուրդների և մրցույթների ծախսերի փոխհատուցման համար տեղական վճար սահմանել 500 դրամ:

Զարիթափի գյուղապետ Խ.Դավթյանը

քարտուղար Ծ .Ազատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

18 հունվարի 2016թ.

# ՈՐՈՇՈՒՄ 3

## ԶԱՌԻԹԱՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ,ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով,26-րդ կետով,32-րդ հոդվածի 1-ին կետով և 27-րդ հոդվածի 2-րդ կետով՝

Ավագանին որոշեց

***Տալ համաձայնություն***

1.Հաստատել 01-01-2016թ-ից Զառիթափի գյուղապետի պաշտոնային դրույքաչափը -265000 /երկու հարյուր վաթսունհինգ հազար/դրամ:

2.Հաստատել 01-01-2016թ.-ից Զառիթափի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը -15, մանկապարտեզ ՀՈԱԿ-1,

3.Հաստատել 01-01-2016թ-ի Զառիթափի գյուղապետարանի,մանկապարտեզի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1 և 2 հավելվածների.

Քվեարկության արդյունքները՝ կողմ 6 դեմ 0 ձեռնպահ 0

Նիստին մասնակցող ավագանիներ՝

Ասլանյան Է.
Բաբայան Վ.
Ալավերդյան Լ.
Գրիգորյան Գ.
Դավթյան Դ.
Գևորգյան Գ.

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան

հավելված N 1

Զառիթափ գյուղապետարանի աշխատակազմի, աշխատակիցների թվաքանակը ,

հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| | Հաստիքի անվանումը | հաստիք ային միավորը | պաշտոնային դրույքաչափը | հաստիքային միավորը | աշխատավարձը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 150000 | 1 | 150000 |
| 2 | Գլխավոր մասնագետ ֆինանսիստ | 1 | 149000 | 1 | 149000 |
| 3 | Առաջատար մասնագետ | 1 | 96000 | 1 | 96000 |
| 4 | Առաջատար մասնագետ | 1 | 96000 | 1 | 96000 |
| 5 | Առաջատար մասնագետ | 1 | 96000 | 1 | 96000 |
| 6 | Առաջատար մասնագետ | 1 | 96000 | 1 | 96000 |
| 7 | Գործավար | 1 | 96000 | 1 | 96000 |
| 8 | Օպերատոր | 1 | 96000 | 1 | 96000 |
| 9 | Հավաքարար | 1 | 76200 | 1 | 76.200 |
| 10 | Վարորդ | 1 | 80000 | 1 | 80000 |
| 11 | Պահակ | 1 | 83000 | 1 | 83000 |
| 12 | Անասնաբույժ | 1 | 92000 | 0.5 | 46000 |
| 13 | Մշակույթի ոլորտի համակարգող | 1 | 75000 | 1 | 75000 |
| 14 | Մշակույթային միջոցառումների կազմակորպիչ | 1 | 73000 | 1 | 73000 |
| 15 | Գրադարանավար | 1 | 73000 | 1 | 73000 |
| | | | | | |

Զառիթափ գյուղի ղեկավար Խ. Ղավթյան

քարտուղար Ճ . Ազատյան

Հավելված 2

## Զառիթափի մանկապարտեզի անձնակազմի

## հաստիքացուցակ

| N | Զբաղեցրած պաշտոնը | դրույք | դրույքաչափը | աշխատավարձը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 112000 | 112000 |
| | | 112*12=1344000 | | |

Զառիթափ գյուղի գյուղապետ Խ. Դավթյան

քարտուղար Շ. Ազատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

18 հունվարի 2016թ.

## ՈՐՈՇՈՒՄ 4 - Ն

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ-Ի ԲՅՈՒՋԵՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.

Ավագանին Որոշեց

***Տալ համաձայնություն***

Հաստատել Զառիթափ համայնքի 2016թ-ի բյուջեն ըստ հոդվածների համաձայն հավելվածի.

Քվեարկության արդյունքները՝ կողմ 6 դեմ 0 ձեռնպահ 0

Նիստին մասնակցող ավագանիներ՝

Ասլանյան Ե.
Բաբայան Վ.
Ալավերդյան Լ.
Գրիգորյան Գ.
Դավթյան Դ.
Գևորգյան Գ.

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան

*Զառիթափ համայնքի 2016թ-ի բյուջեին ըստ հաղվածների*

Ընդամենը եկամուտներ 33800.7 հազար դրամ

*I. հարկեր և տուրքեր հոդված 7100- 5449.5 հազար դրամ այդ թվում.*

1. Գույքային հարկեր անշարժ գույքից հոդված 7131-2149.5 հազար դրամ
Գույքահարկ համայնքի տարածքում գտնվող շենքերի

ա/ շինությունների համար. հոդված 300,0 հազար դրամ

բ/գույքահարկ փոխադրամիջոցներից 7136-2860 հազար դրամ

գ/հողի հարկ համայնքի տարածքում գտնվող հողերի համար 1849.5 հազար դրամ

2. Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման, թույլտվության վճարներ հոդված 7145-250.0հազար դրամ

ա/համայնքի տարածքում շենքերի,շինությունների տեղադրման թույլտվության համար -30 հազար դրամ

բ/համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար 50 հազար դրամ

գ/Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար - 150 հազար դրամ

դ/համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար 20 հազար դրամ:

Այլ եկամուտներ ՝ հոդված 7400-1600.0 հազար դրամ,որից

համայնքի սեփականությունը համարվող հողերի վարձակալության վարձավճարներ -1250 հազար դրամ:

Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ 50.0 հազար դրամ:

Այլ եկամուտներ 7451 ----- 300.0 հազար դրամ

,որից օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ --- 300.0 հազար դրամ

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ հոդված 7331 ---26941.2 հազար դրամ:

Համայնքային ծառայություններ /հազար դրամով/

1.Տեղական ինքնակառավարում

2111 վարչական բյուջե -28360.0 հ.դ. , Ֆոնդային բյուջե 100.0 հ.դ

2161 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

վարչական բյուջե------ -300,0 հազար դրամ

2130 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 70.0 հ.դ.

Տնտեսական հարաբերություններ

Շենքերի և շինությունների կառուցում 850.0 հ.դ ֆոնդային բյուջե

Հանգիստ մշակույթ և կրոն. վարչական բյուջե

2811 Հանգստի և սպորտի ծառայություններ -300,0 հ.դ.

2824 Այլ մշակույթային կազմակերպություններ 250.0հ.դ

Կրթություն

Նախադպրոցական կրթություն

2911 Վարչական բյուջե 1500 ,0 հ.դ.

Սոցիալական պաշտպանություն

Վարչական բյուջե 1100.0 հ.դ.

Պահուստային ֆոնդ

վարչական բյուջե 5007.5 հ.դ

Ֆոնդային բյուջե 115.7 հդ

Խ.Դավթյան

Շ . Ազատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

18 հունվարի 2016թ.

# ՈՐՈՇՈՒՄ 5

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ-Ի ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի ԹԻՎ 32 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Իրավական ակտերի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի „Բ„ ենթակետի, [illegible] 22 օրենքի 77.5 [illegible] պահանջներով.

Ավագանին Որոշեց

Ուժը կորցրած ճանաչել 2015թ-ի օգոստոսի 8-ի ավագանու թիվ 32 որոշումը:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 6 դեմ 0 ձեռնպահ 0

Նիստին մասնակցող ավագանիներ՝

Ասլանյան Ե.
Բաբայան Վ.
Ալավերդյան Լ.
Գրիգորյան Գ.
Դավթյան Դ.
Գևորգյան Գ.

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/

18 հունվարի 2016թ. որոշումը վերանայվել է ավագանու 23.02.16թ

ՈՐՈՇՈՒՄ 6 թիվ 13 որոշմամբ

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարմա մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջով.

Ավագանին Որոշեց

1.Հավանություն տալ ՀՀ Վայոց Ձոր մարզի Զառիթափ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսված փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գյուղնշանակության համայնքային սեփականություն համարվող 10-022-0208-0015 0.05 հա ծածկագրով այլ հողատեսքը փոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա,փոքր հզորության հիդրոէլեկտրոկայանի կարգավորիչ ավազան կառուցելու համար:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործարքը:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 6 դեմ 0 ձեռնպահ 0

Նիստին մասնակցող ավագանիներ՝

Ասլանյան Ե.
Բաբայան Վ.
Ալավերդյան Լ.
Գրիգորյան Գ.
Դավթյան Դ.
Գևորգյան Գ.

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
REPUBLIC OF ARMENIA VAYOTS DZOR REGION ZARITAP VILLAGE

ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ /հեռ. 91-5-07/
18 հունվարի 2016թ.

ՈՐՈՇՈՒՄ 7

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կրթության Գիտության նախարարի 2010թ-ի մարտի 18-ի թիվ 113 հրամանի 7-րդ կետի պահանջը.

## Ավագանին որոշեց

***Տալ համաձայնություն***

Զառիթափի միջն.դպրոցի կառավարման խորհրդում, խորհրդի անդամ նշանակել՝ Շմավոն Մամիկոնի Ազատյանին:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 6 դեմ 0 ձեռնպահ 0

Նիստին մասնակցող ավագանիներ՝

Ասլանյան Ե.
Բաբայան Վ.
Ալավերդյան Լ.
Գրիգորյան Գ.
Դավթյան Դ.
Գևորգյան Գ.

Համայնքի ղեկավար Խ.Դավթյան